

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի Ալաշկերտի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնն զբաղեցնելու համար:

ՀՀ Արմավիրի մարզի Ալաշկերտ համայնքի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի (ծածկագիր 3-1-2):

Առաջատար մասնագետը աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ սահմանված կարգով մասնակցում է համայնքի հողերի գոտիավորման ու օգտագործման սխեմայի կազմման աշխատանքներին, ինքնակամ հողազավթման կանխման, կասեցման և հաշվեկշռի կազմման, քաղաքացիական պաշտպանության հետ կապված աշխատանքներին, իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ :

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անհրաժեշտ է՝

- Միջնակարգ կրթություն, ունի ՀՀ Սահմանադրության , <<Տեղական ինքնակառավարման մասին>> , <<Համայնքային ծառայության մասին >> և <<Հողային օրենսգրքի մասին>> անհրաժեշտ գիտելիքներ:

- Սույն պաշտոնի 10-րդ կետի <<բ>> ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն,

- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն: Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2019թ. հունիսի 17 -ին, ժամը 12:00 -ին, Ալաշկերտի համայնքապետարանի շենքում:

Դիմող ՀՀ քաղաքացիները Ալաշկերտի համայնքապետարանի աշխատակազմ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

-Դիմում մրցույթային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),

-տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պատճենները՝ բնօրինակների հետ միասին.

-հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 15-ի N 98 -Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով,

-հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

-արական սեռի անձինք՝ զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասային կցագրման վկայականի պատճենները,

- մեկ լուսանկար 3X4 սմ չափի,

- անձնագրի պատճենը:

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրերին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Արմավիրի մարզի Ալաշկերտի համայնքապետարան (հասցե՝ 1 փողոց 1 Ա, հեռ.՝ 098424045) և ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՍ հարցերով վարչություն, հասցեն՝ Աբովյանի 71, հեռ.՝ 0237 2 76-49: Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 10.00-ից 18.00-ն, բացի շաբաթ և կիրակի օրերից: Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2019 թվականի հունիսի 3-ը: